ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար և ծրագրային փաթեթների (ծրագրային ապահովման արդիականացման) խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 06.03.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 գնման պայմանագրում 11.05.2026թ. կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 02.04.2026թ. N 408-Ն որոշում
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 Պայմանագիրը լրացնել նոր վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.14 կետերը

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
06.03.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 գնման պայմանագրի

11. 05 . 2026թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գործադիր տնօրեն Վ. Մխիթարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.04.2026թ. N 408-Ն որոշումը և վարչարարության համակարգչային ծրագրային փաթեթների (ծրագրային ապահովման արդիականացման) խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 06.03.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

1.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

1.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

1.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
կառավարական տուն 3	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1570020836060100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02617951
Հ/Հ 900011053627	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Գործադիր տնօրեն
_____ Վ. Հարությունյան	_____ Վ. Մխիթարյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
06.03.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 գնման պայմանագրի
11.05. .2026թ. կնքված N 5 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	մինչև 2025թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48211240/1	համակարգչային ծրագրային փաթեթների (ծրագրային ապահովման արդիականացման) խորհրդատվական ծառայություն	60 000 000	-	-	-	-	-	-	-	-	-	15 000 000	15 000 000	15 000 000	**15 000 000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011053627
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
_____ Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951
Գործադիր տնօրեն՝
_____ Վ. Մխիթարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

AMERIABANK

08.05.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.14483.26

Բենեֆիցիար՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.14483.26
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 06.03.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 03 հուլիսի 2028թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender1@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

«AMERIABANK» CJSC
CORPORATE AND
INVESTMENT BANKING
DEPARTMENT
FOR CONTRACTS
AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

08.05.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.14485.26

Բենեֆիցիար՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.14485.26
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՎԻԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընդունիչ) կողմից 06.03.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 2,250,000.00 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 03 հուլիսի 2028թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender1@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ԿՈՐՊՈՐԱՏԻՎՆՈՅ ԵՎ ՖԻՆԱՆՍՈՎՈՅ ԲԱՆԿՈՎՍԿՈՅ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ԴԼՅԱ ԴՈԳՈՎՈՐՈՎ ԻԴՈԿՈՒՄԵՆՏՈՎ «AMERIABANK» CJSC CORPORATE AND INVESTMENT BANKING DEPARTMENT FOR CONTRACTS AND DOCUMENTS 02502212

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

Tender5

From: Tender1 <tender1@minurban.am>
Sent: Friday, May 8, 2026 12:47 PM
To: Tender5@minurban.am
Subject: FW: ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1_Բանկային երաշխիքների թողարկում
Attachments: 485_08052026120459.PDF; 483_08052026120451.PDF

From: Trade Finance [mailto:TradeFinance@ameriabank.am]
Sent: Friday, May 8, 2026 12:26 PM
To: 'tender1@minurban.am' <tender1@minurban.am>
Cc: Trade Finance <TradeFinance@ameriabank.am>
Subject: ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1_Բանկային երաշխիքների թողարկում

Հարգելի գործընկեր,
Սույնով հաստատում ենք, որ 08.05.2026թ. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկվել է՝

- O.AB.100.12CIB.PIED.0.14483.26 Որակավորման ապահովումը
- O.AB.100.12CIB.PIED.0.14485.26 Պայմանագրի ապահովումը

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի կնքած ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 պայմանագրի գծով:

Երաշխիքների բնօրինակից արտատպված տարբերակները՝ կից:

Հարգանքով՝

I'm Monika Hayrapetyan
Specialist, Payment instruments and escrow division, Ameriabank
+37410 56 11 11 | www.ameriabank.am | 2 V. Sargsyan Street, Yerevan, RA
#bankaboutpeople